

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԵՈՂ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ապահովադիր

Ապահովադիր կարող է հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր հանդիսացող կամ իրավական այլ հիմքով ավտոտրանսպորտային միջոցի տիրապետման, տնօրինման, օգտագործման (շահագործման) իրավունք ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

Փոխհատուցում ստացող անձ

ա) ֆիզիկական անձինք, որոնց կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառվել է վնաս և որոնք ՃՏՊ-ի հետևանքով պատճառված վնասների արդյունքում օրենքով և այլ իրավական ակտերով ունեն փոխհատուցման պահանջի իրավունք,
բ) իրավաբանական անձինք, որոնց գույքին պատճառվել է վնաս և որոնք ՃՏՊ-ի հետևանքով պատճառված վնասների արդյունքում օրենքով և այլ իրավական ակտերով ունեն փոխհատուցման պահանջի իրավունք:

Ապահովագրության օբյեկտ

Ծրագրով կարող է ապահովագրվել միայն տվյալ ավտոտրանսպորտային միջոցի գծով «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ-ում ԱՊՊԱ պայմանագիր ունեցող թեթև մարդատար ավտոտրանսպորտային միջոցի (որը չի շահագործվում որպես տաքսի, երթուղային տաքսի կամ հանրային տրանսպորտ) սեփականատիրոջ պատասխանատվությունը, որն առաջանում է ապահովագրության պայմանագրում նշված տարածքում ավտոտրանսպորտային միջոցի շահագործման ժամանակ երրորդ անձանց կյանքին, առողջությանը և գույքին պատճառված վնասների արդյունքում:

Ապահովագրական պատահարներ-Ապահովագրական պատահար է համարվում Ապահովադիրի կողմից ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ապահովագրության պայմանագրում նշված ավտոտրանսպորտային միջոցի շահագործման հետևանքով տեղի ունեցած ՃՏՊ-ի արդյունքում երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասը, որն ՀՀ օրենդրությամբ սահմանված կարգով հիմք է հանդիսանում տուժած անձանց կողմից վնասի փոխհատուցման պահանջի համար և կապված է միայն՝

- ա) այլ ավտոտրանսպորտային միջոցների վնասվելու կամ ոչնչանալու հետ,
- բ) այլ ավտոտրանսպորտային միջոցներում գտնվող գույքի վնասվելու կամ ոչնչանալու հետ,
- գ) այլ շարժական կամ անշարժ գույքի հետ շարժական ավտոտրանսպորտային միջոցի բաժվելուց առաջացած վնասի կամ ոչնչանալու,
- դ) ֆիզիկական անձանց մահվան կամ աշխատունակության կորստի հետ:

Ապահովագրության տարածք

Հայաստանի Հանրապետություն և Արցախի Հանրապետություն

Ապահովագրական գումար, ապահովագրավճար

Ապահովագրական գումար	Սակագին	Ժամկետ	Ապահովագրավճար
1 250 000	0,4%	10 օրից 6 ամիս (ներառյալ)	3000
1 250 000	0,4%	7 ամսից 1 տարի	5 000

Ոչ պայմանական չհատուցվող գումար-չի կիրառվում

Ապահովագրավճարի վճարման կարգ և ժամկետ – միանվագ, ապահովագրության պայմանագրի կնքման պահին

Պահանջվող փաստաթղթեր և տեղեկություններ՝

- ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագիր կամ հաշվառման հայտարարագիր,
- Ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթեր
- Իրավաբանական անձի դեպքում՝ պետ գրանցման վկայականը
- Հետախոսահամար

Ապահովադրի (վարողի) գործողությունները պատահար տեղի ունենալու դեպքում՝

- Չտեղաշարժել ավտոմեքենան,
- Չլքել, չթողներ, չհեռանալ պատահարի վայրից,
- Չընդունել որևէ պատասխանատվություն,
- տեղի ունեցած պատահարից հետո անհապաղ՝ ոչ ուշ քան 40 րոպեի ընթացքում, Ապահովագրության պայմանագրում նշված հեռախոսահամարներով տեղեկացնել Ապահովագրողին: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Ապահովադիրը կամ վարորդը պատահարի արդյունքում գտնվել է անգիտակից վիճակում: Անհնարին դարձնող հանգամանքների վերացման դեպքում Ապահովադիրը կամ վարորդը պարտավոր է անհապաղ՝ ոչ ուշ քան 40 րոպեի ընթացքում, Ապահովագրության պայմանագրում նշված հեռախոսահամարներով տեղեկացնել Ապահովագրողին պատահարի մասին:
- Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուն հաջորդող օրվանից հաշվված առավելագույնը 15 աշխատանքային օրվա ընթացքում միանվագ իրականացնում է ապահովագրական հատուցումը: